

կան և արտաքին հասարակական յարաբերութիւններն նեն ոչ քրիստոնէական: Վերջրէք երկու հարեան գիւղեր մէկը քրիստոնէայ ազգաբնակութեամբ միւսը դիցուք մահը մետական, եթէ վերացն նք զգետտի, լեզւի և արտաքին կրօնական ծիսական տարբերութիւնները. նրանց մէջ դժուար կը լինի ուրիշ տարբերութիւններ գտն լ:

Թէ ի՞նչ է արել մեր ազգային եկեղեցին անցեալում, այդ արդէն պատմութիւնը գնահատ' լ է: Ի՞նչ է անում այժմ նոյն եկեղեցին, իրական կեանքի պատկերը այդ գործունէութ' ան կենդանի վիան է: Ի՞նչ պէտք է անի եկեղ'ցին սուրանից յետոյ, այդ եկեղ'ցու իսկական սրտացաւ անդամների ամենաէական հոգացողութ' ան առարկան պէտք է լինի: Այն, ինչ որ անգոր է անելու ծիսականութիւնը, զօրաւոր կը լինի կատարելու կենդանի բովանդակութիւնը — կենդանարար հոգին, որի անսպասելի շտեմարանը Աւետարանն է: Միայն օգտուել է հարկաւոր ոչ անհասկանալի ալ միաբանութեամբ, եկեղ'ցական ամբողջ կազմով:

Սմբատ Բ. Սարգսեանց.

Մեծ Շահրիար 1908 թ. 5 հոկտ.

## ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

### 19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ:

Այս շրջանում անարժէք ստանաւորներ են շինում և միւս Մխիթարեան քերթողները՝ Աւետիքեան, Զաւիշախեան, Թոմասեան և նոյն իսկ Բագրատունի, որոնց բանաստեղծութիւնները բաւական ուշ, 1852 և 1853 թուականներին ամփոփուած են երկու հատորի մէջ՝ «Տաղը Մխիթարեան վարդապետաց»: Երբորդ հատորը, հրատար. 1854 թ., իւր մէջ ունի եզուարդ Հիւրմիւզի (1799—1876) տաղերը, որ սակայն ես նկատի չունիմ՝ ձեռի տակ չունենալով:

ԳԱՔՐԻԷԼ ԱԻՅՏԻՔԵԱՆԻ (1751—1827) վեց երգերից իսկական բանաստեղծութեան հոտ բուրում է միայն «Մօրն Սրբոյն



Ալեքսիանոսի եղերերգը», և հենց այդ պատճառով կասկածելի է թուում թէ արդեօք սրգեկորացո մօր այդ սրտառուչ ողբը մի թարգմանութիւն կամ նմանողութիւն չէ՞ որ և է եւրոպացի բանաստեղծի: Միւս երգերը՝ Տրդատի, Շուշանի, Գարեգին Սրուանձաեանի, Վարդանի ու Վահանի վրայ գրած տաղեր են, բոլորը կրօնական բովանդակութեամբ, որի մէջ իբր բանաստեղծօրէն նկարագրւում է Տրդատի և Հռչէի մենամարտութիւնը:

Աւետիքեանի ոտանաւորներն շատ աւելի բարձր չեն ՄԱՆՈՒԼԻ ԶԱՒԶԱԽԵԱՆԻ, (1770—1835) քերթուածները: Այդ ոտանաւորների արժէքը իմանալու համար հարկաւոր է իմանալ թէ ինչպէս են յօրինուել դրանց մեծ մասը: Մխիթարեանների այս մեծ սերնդի մէջ մի տարօրինակ գրական սովորութիւն է եղել, նրանք զսւարճացել են ոտքերով ու յանգերով և ոտանաւոր գրելով՝ իրար հետ հանաքներ են արել: Զբաղուած լինելով ուրիշ գրական ծանր աշխատանքներով՝ բառարան գրելով, թարգմանութիւններ անելով և այլն, մէկ մէկ էլ պէտք են զգացել հանգստանալու և իրենց հանդստութիւնը գտել են քերթողութեան մէջ: Բայց քերթողութիւն ինչ տեսակի: Ինչպէս հին աշուղները իրար հետ մանելիս՝ միմեանց առեղծուածներ էին առաջարկում յանգեր ու ոտքեր տալով, և մրցակիցը պէտք է իւր ոտիս պատասխանը տար առաջարկուած յանգերով ու ոտքերով, ճիշտ նոյն ձևով իրար հետ մրցում են և Մխիթարեան ընկեր քերթողները: Իրենց բառով ասեմ, նրանք յօրինում են «բռնայանգ» և «բռնակարգ» ոտանաւորներ: «Յորժամ տացի բանաստեղծին նիւթ ինչ հանգերձ յանգական բառիւք, և ըստ այնմ պահանջեցի զտաղն, կամ թէ քերթողն ինքնին՝ այլոյ սւրուք տաղի յանգաւոր բայիւք և չափովք յօրինեսցէ ինչ կամ դարձուցէ նմին պատասխանի, այս ազգ քերթածաց կոչի բռնայանգ»: Նիւթը և յանգն ու չափն ուրեմն տալիս են քերթողին և պատուիրում նրան, որ բանաստեղծէ, և նա բանաստեղծում է «բռնայանգեր»: Բայց այս դեռ քիչ է. այստեղ քերթողն երեւի ազատ է դեռ տրուած յանգական բառերը դատաւորելու մէջ. բայց «եթէ որով առեալն իցէ կարգաւ զծայրայանգ յայնս՝ անփոփոխ նովին յիւրումն անտեր իւր պահեսցի տաղի, ասի յայնժամ և բռնակարգ»: Ահա՛ թէ ինչով են զսւարճանում այս քերթողները. նրանք «բռնազրօս յանգեր» են շարում:

Այսպէս Առան Սիտիկեանը, այսինքն Արսէն Բագրատունին 1725 թուին առաջարկում է Վահրամ Ռուբինեանին, այսինքն Զախախեանին (Մխիթարեան քերթողներն աշուղների պէս իրենց կեղծ անուններն ունին) գրել մի բռնայանգ և բռնա-



Պարզ ոտանաւոր հենց իրեն Ջախջախեանի այդ տեսակի քերթողութեան վրայ, ընդամէնը շոքս տուն 15-վանկանի տողերով. առաջին տան յանգերը պիտի կազմեն յայնպիսի, ձախիճ, խիճ, փապիճ բաւերը. երկրորդինը՝ քաւերաւ, կամար, կաւ, անդադար. երրորդինը՝ նայտաւ, ակաւ, օրիւն, ժամանակ, իսկ չորրորդինը՝ կենաց, հիւսեաց, քաւեաց ի բաց: Եւ Ջախջախեանը գրում է այդ ոտանաւորը (Տաղք. Բ. 89): Զորմանալ պէտք է, թէ ինչպէս նա այսպիսի բանադրօտութեամբ դեռ կարողանում է իմաստ դնել իւր ոտանաւորի մէջ: Բազմատունին ինքն էլ ապա նոյն յանգերով պատասխան է գրում Ջախջախեանի ոտանաւորին (Տաղք. Ա. 143): Եւ այդ դեռ բաւական չէ, Ջախջախեանը նորից ուրիշ սաանաւորով, նոյն յանգերով պատասխանում է Բազմատունուն, և սիրահարուելով այդ յանգերին՝ դարձեալ ուրիշ երկու սաանաւոր էլ է գրում «Յուսով լաքիմը» և «Յամենայնի խոհեմութիւն»: Եւ այդ անում է նա մեծ սիրով և պարծանքով.

Եթէ զկարուած բանադրօտիկ ինձ կարկառէ նպատակ,

Իմ մեղուօրէն ճախիւք զնովաւ քերթողական ակորթակ-  
Ջախջախեանը վարպետն է այս կարգի ոտանաւորներին. ունի մօտ յիսուն այսպիսի քերթուած նրա ոտանաւորներին մէջ բազմաթիւ են և այնպիսիները, որոնք մի և նոյն յանգերով են կազմուած, ինչպէս՝ 19 քերթուած մի և նոյն մեհնանդ—գահաւանդ, երթեկէկ— և աաբեկ լէն յանգերով (Բ. 68—82):

Ասիլ չի ուղիւ, սր այսպիսի ոտանաւորները լուի մեքենայան արգիւնք են մի տեսակ սրամտութեան, բանաստեղծութիւն որոնել այդանդ կարելի չէ. քերթողին տրւում է յանգ և աւելում է գովիւր յոյներին և նա գրում է «Դովեստ յունաց» (Բ. 62).

Ջելլենական զարմիցն բզպեւծ

Առնում գովել նիւթ ոչ բսերջ:

Վարժեաց ուսմամբ մեծըն Սողոմ

Ջազգ սովորեալ յանգործ գաղօն.

Ջօրքդ ձրկանց և զխնայաւառ

Իմաստութեամբ լից խուսովառ.

Եւ որք վարժեալ քաղել զկօրս,

Ջարեսական ուսան զարս: Լին:

Բայց նոյն քերթողը նոյն յանգերով և հակառակն է գրում՝ «Պարտաւ Յունաց».

Ազգ պանծալի երբեմն պիւծ,

Ամենայնիւ կառ արդ բսերջ.

Եւ զոր ուսոյց Թաղէս, Սողոմ,



եգիպտական էր այն զոդօն:

Արհեստ քո արդ է լիսեչափառ:

Կամ ձուկն որսալ լուսնոյն ի վառ:

Հեռի ի քէն նախնին որս,

Թութ քաղեսջիր տնկեա horns: ևլն:

Ապա նոյն բանատեղծը զղջում է իւր վերջին գրուածքի վրայ և նոյն յանգերով գրում է «Զեղջ ընդ պարտաւին Յու- նաց»:

Թէ աղբն Հելլէն երբեմն ըզգօն և զինուք պիտի

Յրդ յիմաստից յամենայն բարեաց բռնեց,

Մի զարմանար, ծնցի կրկին Լիկուրդ Սաղսն:

Թողցեն զարձեալ համակեալ կան ի զոդօն:

Ի նըւաղիլ լուսնոյն ծիւրի և խեչափառ:

Եւ պատարի յորժամ լուսինն է յուսափառ:

Եւ երբ թխպին երկինք հոգմուա յամպրոպ յարս,

Եւ դեղեցիկն ի դաշտ տապառտ զընի horns: ևլն:

Ի՞նչ կարելի է առել այս տղայամիտ խաղերի համար, որ անում են Վենետիկեան քերթողներն իրենց հասուն տարիքում, և որ սահմանուած են միայն ընկերներին զուարճացնելու համար:

Առեր ահա՛ զոր ինձ ետուր յանդ ի վըսեր,

Խնդրուածոյդ մի՛ անխող զիս զու առեր:

Թէ քաղցրացի երգս անպատճոյճ քան ըզհանուրց,

Յետ կարգալոյդ արի ի մախաղդ և կամ ի քուրծ:

Եւ խկապէո, «քուրծ ձգելու» բաներ են դրանք: Եւ բանատեղծներն իրենք ևս, նոյն ինքն Ջախջախեանը մեծ բան չեն համարում այդ տաղերը:

Գիտեմք անշուշտ նիւթեալս աւելի չէ ինչ ակտորժ յօրինակ,

Եւ ո՞ գիտէ վարձահատոյց լիցի ներող ժամանակ:

Ոչ շուք անձանց այլ գիւրուլթիւն միայն խնդրեմք մեր կենաց:

Ոչ թէ պըսակ զոր բաղդն ազահ հէդ քերթողին ոչ հիւսեաց:

Բանդեալն եռմոս թէ մըմնջէ անն ունիցի ինչ բարեաց:

Իմ, Սիսակեան, լուր նըւագիս: Թէ չախորժես կաց ի բաց:

Այս «բանտեալ եռմոսները», շղթայակապ տաղերը, շատ բան չեն տալիս մեր մտքին, և ոչինչ մեր զգացումին: Այդ տաղերի մէջ Մխիթարեան քերթողները զբաղւում են իրենց առտնին խնդիրներով, ընկերական կեանքի մանր դէպքերով, ոտանաւորով գովում են միմեանց, կարծես մի տեսակ սիրահարուած են մէկմէկու և իրար կրթել ու խրատել են ուղում: Նրանք փախուած իրենց վանական պատերի մէջ՝ իրենցից, իրենց գրական աշխատանքներից, իրենց բառախաղերից զուրս աշխարհ գրեթէ չեն տեսնում: Եւ այս ամենը երգւում է ներ-



դաշնակ, երաժշտական սաքերով, լիաճնչուն յանգերով, մի խօսքով հիանալի տաղաշափութեամբ, բայց աւանդ, միայն այդքան: Մարդ ցաւում է, որ այդ գեղեցիկ տղերք, լիքը յանդերը չունին և լի ու և հարուստ բովանդակութիւն. որ այդ ներդաշնակ տղերից չի կազմում և ներդաշնակ միութիւն յօրինուածքի. այլ միայն կցկտուր, յաճախ անյարիր շարուածքներ են առաջ գալիս, լաւագոյն դէպքում հաս հաս առածանման, իմաստալից խօսքերով, որոնց վրայ դոնէ մէկ մէկ հանդուժ է կարդացողի ծանրացած միտքը:

Բարոյական գաղափարները, որ Զախճախեանը դնում է իւր «բանայանդ» և ոչ «բռնայանդ» ստանաւորների մէջ, շուտ սովորական վարդապետական քտրոպներ են, բայցն ընդհանար ընաւորութեամբ: Աստուած իւր գերադոյն իմոտութեամբ մարդկանց վիճակը պէս պէս է ստեղծել, որպէս զի հնարար լինի աշխարհում ուղրել. ուստի մարդ չպիտի դժգոհի իւր վիճակից. որովհետեւ

Եթէ անցնիւր ոտիկ թաղից էր արժանի,

Ի քոյդ վարտիս կամ յաղօրիս ո՞ տարժանի:

Կամ թէ գեղջուկ քո պէս միէ անպէտ քարակէզ

Ո՞ր բան յայնժամ քղքոյդ հեշտին բըր էր պարակէզ:

Մի հին գաղափար, որ գրադեցրել է մեր վարդապետներին, այն է թէ աշխարհում անպէտք բան չկայ. աստուածային տեսչութեամբ, որ չպէտք է ուրախանուլ, ամենայն ինչ որոշ նպատակի համար է ստեղծուած.

Ոչ թօնք անպէտք և ոչ երաշտ,

Ոչ առիւծուց ոչ վագերց վաշտ...

Ոչ անպիտան տեսցես դու զիժ,

Եթէ յաչացդ առցես զբիժ...

Աշխարհի մէջ ամենաբարձր բանը, որ արժանի է երգչի կիթառին՝ է առաքինութիւնը միջնադարեան քրիտոնէական կրօնական իմաստով: Առաքինի է նա, որ «ճարտարապէս ընդդռանէ զընդդիմակից մարմին հետ», որին չեն գրաւում աշխարհի փառք ու պատիւը, ճոխութիւնը, ոչ քաջութեան անունը, ոչ աշխարհի սէրը, որ յաղթում է կրքերին և որի ուշ ու միտքը միշտ Աստուծուն է ուղղուած.

Երբ նստի յառուակ, և կամ կողմանի ի ծաղկեայ պարակէզ

Նիթք շիւղք ամենայն զԱռտուած նկարեն իբրեւ ի քարակէզ:

Ունեցածով գոհանալ, հոգ չառնել աշխարհում գանձ ժողովելու, որ մարդու համար ցեց է: Թէպէտեւ ուսումնականներին չեն յարգում մեր ազգի մէջ, բայց միշտ պէտք է աշխատել աշխատութիւնն ամեն բանի կըյաղթէ:



Վաստակը շքեղք՝ իմ ժառանգ յուէրժակից պայազատ,  
Անմահութիւն քանդակեալ նահատակիս ի ճակատ,—

Ահա՛ Մխիթարեան հոստակրօնի մխիթարութիւնը իւր մե-  
նաւոր հեանքի մէջ: Ամեն բանում խոհեմութիւն է հարկաւոր  
և քաջ մտածողութիւն.

Թէ ոչ կըշռէ ակըն դիտող,

Ինչ ոչ արժէ ձիգ լայնալիծ

Թէ ոչ ըզժամ գիտէ որոտղ,

Զարժեն և խուռն հաւք ի ճահիծ:

Այս նիւթերի վրայ պիտի աւելացնել և այն, որ տաղեր-  
գութեանն առարկայ են դառնում Զախճախեանի համար նաև  
կրօնական բաներ—Առաւածածնի ծնունդ, Փրկչի ծնունդ, սրբեր  
և այլն, ապա ըսեն Մխիթարեան ընտանեկան կեանքի դէպքեր,  
ուղերձներ, ձօներ ուղղուած այցելուներին, իրենց «առտու ա-  
ծապատիւ» հոգևոր տիրոջը, աթուակալներին, նորընծաներին,  
«ի հանդէս ընդունելութեան վարդապետական գաւազանի եր-  
կուց նորընծայ վարդապետաց», «ի հանդէս ոքեմառութեան»,  
«ի հանդէս ու խաղաղութեան» ևլն. բոլորը միայն Մխիթարեաննե-  
րին, այն էլ միայն ժամանակակից Մխիթարեաններին հետաքրքրող  
բաներ, զուտ Մխիթարեան «հայրենասիրութեամբ» դրուած:

Ընդհանուր հայ աղգայինը, հայ աղգային վիճակը, խնդիր-  
ները չեն հետաքրքրում Զախճախեանին, եթէ այդ խնդիրների  
մէջ չուղենանք դնել լեզուի այն երկար դովեստը—«ի վերայ  
լեզուի բան», որի մէջ սակայն հայ լեզուի մասին չէ խօսում,  
այլ ընդհանրապէս լեզուի: Նոյնպէս «ի սրբաւազիրս նախ-  
նեաց երդիծաբանութեան» մէջ մարդ սպասում է դանել գո-  
վեստ հայ նախնիներին, բայց այդ խոշոր, բոլորը առ յանդով  
կազմուած քերթուածի մէջ այն միտքն է յայտնում, թէ ամե-  
նայն բան, որով ներկայ դարը պարծենում է, իւր սկիզբն ունի  
հին դարի մէջ, և միայն ի միջի այլոց հետևեալ միամիտ աղ-  
գային անսփառութեան սողերն են մէջ գալիս.

Երբ Յոյնն ի դաշտ՝ մեր ցրտահար

Ընդ վայրատուն ցիւռ և իշեար,

Եւ կամ որոտյր զանգօր ճագար,

Եւ բուռ քաղէր կաղին և խար,

Հայկ նախահաւ դիրապարար

Յատուր ցորեան և ի յաշար,

Ձեռնայր թիկունք իւր ի քովթար

Եւ ի սամայրն ի յսկեկար . . .

Բամբիշն Հայոց էր ի ժանուար,

Աշխոյժ մանկտին քաջ ձիավար . . .

Բանաստեղծութեան նիւթ դառնում են և գրքերի տպագրութիւնը, և միջի այլոց Խորենացու տպագրութիւնն ևս ողբերէ է այս քերթողին. և սկսաք է խոստովանել, թէ արեւ և դարձեալ «բռնայանգ» բայց լուսադոյն տողերն է ներշնչել նրան.

Երգել խնդրես զանշուք Խորնի,

Որ առ ինչ պէրճ քան զԱնի,

Որ զԱրամեան զարմ և համբաւ

Պայծառացոյց և շուք անբաւ:

Այո՛ հնչեմ կերկեր ի փող

Բերթողահօր իմում ներքող,

Որ զիմա երգէ գիւցաղուն Հայկ

Տոհմիս որդւոց արև և այգ:

Որ ինձ վիպէ զքաջն Արամ

Հիւսեալ նմին հիւսք տնթառամ:

Խորենշան մեզ այս տարի,

Որ իւր եգիս բազուկ արի,

Չնորայն կանգնել արծան արդար

Ի տիպ աշաց գործոց տիպար,

Տալ յընթերցաւած ազդին Հայոց

Ձորս են ի փառս և զոր ի լոց,

Ձոր նայն սուլեաց քաղցր ի յառաջ,

Եւ ինքեցաց յողբ ու ի թառաջ:

Պէտք է կարծել թէ Խորենացու ողբը գոնէ պիտի ազդէր քերթողին, և նա այստեղ պիտի քարձգանար ընդհանուր ազգային վիճակին և խնկախոն հայրենասէր դառնար. բայց ոչ: Նա ողբում է միայն Հայոց ձեռագիրներէ կորուստը, մնացածն անտարբեր է նրա համար.

Ինձ զի՞ պիտին կսթողրդ և սիւն,

Ձոր հուր վառնեաց ներկեաց արեւն.

Ինձ առիմէ՞ խոյր քո և բարձ,

Ձոր աջ անդուլթ վաղուց եքարձ . . .

Կամ նոյն յանդերով և նոյն խնդրի մասին գրած երկրորդ բանաստեղծութեան մէջ.

Ոչ զամբարտակս և ոչ զսիւն

Ողբամ՝ յարտօսը ողջամբ արիւն:

Ձոր բաղդ Յոնեաց՝ բաղդն և եւարձ,

Ձթաղ ազգիս զգահն և զքարձ:

Եւ այսպէս, «Աստուած առաւ և Աստուած առաւ», ուրեմն «Աստուծով միխթարութիւն»: Եւ այս «Աստուծով միխթարութիւնը» այն աստիճանի դեռ իշխում է, որ տեղ է գտել նոյն իսկ սգաւոր «Ոգի Հայաստանի» պատկերի տակ, որ երևի



առաջին անգամ այս մեծ Մխիթարեաններից մտածուած և զեռեղուած է Խորենացու այս 1828 թուի տպագրութեան վերջում: Ահա թէ ինչպէս է հնչում Ջախջախեանի այդ ոտանաւորը՝ «Արձանագիր առ ռդին եղերերգակ ընդ դորժանումն Հայկազեան դահու»:

Ոգիդ լսեմ, զթագն և զւարձ

Թէ ինձ ողբաս զոր բաղդն երարձ,

Մի՛ լար. բաղդին բարքն են անդարձ:

Թէ զբարձման սրգաս դու խանձ,

Լաց, ա՛ռ և զիմ արտօսը անսանձ.

Ո՛հ, լամ՝ ըզձեզ հեռ և նախանձ:

Մինչ Խորենացու սրտից արիւն է կաթում, երբ յիշում է դահի անկումը, 19-րդ դարու սուեալ վարդապետը, Յունաստանի ազատութեան օրերում նրա սղբի տակ ասում է «Մի լար. բաղդին բարքն են անդարձ»: Բայց և նոյն վարդապետը լալիս է և լացի հրաւիրում, որ այդ անկման պատճառն են եղել «հեռ և նախանձը»: Եւ ուրիշ բան էլ ոպասել կարելի չէր մի կրօնաւորից, որի համար բանաստեղծութեան գլխաւոր նիւթը ընդհանուր բարոյական խրատն է կազմում: Ահա թէ ինչ է ասում նա այս մասին մի բռնայանդ, բայց գեղեցիկ տողերով հարուստ քերթուածի մէջ՝ «Մուռայն առ Արամեան քերթող»:

Նիւթ քերթածաց նախ եղիցի ձեզ Արամազդ,

Գործք եղիւսեանց և ուղղութիւնը հանճարեմատ.

Խոտումն ախտից և կրթութիւնը մտաց հրահանգ» . . .

Անշուշտ, անմարմին վերացական բարոյականը չէ, որ երգի նիւթ դառնալով պիտի կարողանար «զանհագներդակն ի յԱրամեանց ջնջել արատ», ինչպէս ցանկանում է Ջախջախեանը վերայիշեալ երգի մէջ, այլ բուն ազգային կեանքը, մարդու թրթռուն սիրտը: Եւ այն ինչ որ Ջախջախեանը խրատներ կարդալով ուղղում է հայ բանաստեղծներին, գրանով խկապէս իւր և իւր ընկերների երկերն է բնորոշում:

Առ ինչ շարժք դուք զերկնուղէշ սօս և նոճի

Առ սիւք հողմոց, քէ բոցիցդ յերգ՝ սիրս ոչ ձօժի:

Կամ թէ քերդողն ամհացեալ զերդ սէդ առիւծ,

Բաշ ծածանէ՝ ծեծէ զձեռ, բայց սիրսն է հիւժ.

Կամ թէ սրավար ատա անդ սուրայ իբրև թռչուն,

Ջրոյն մօռաւայ և ոչ գիտէ ո՛ւր իցէ չուն . . .

Են և քերդողը երկայնաթռիչք քան զՄասիս,

Յորոց ճախրել թէև պշնուս՝ խոնջեալ կառիս:

Մեր «սիրտը չի ձօժում» այդ «երկայնաթռիչ» բանաստեղծութիւնից, ու «խոնջացած յետ ենը կառում», որովհետեւ



գրուածքի «սիրտն է հիւծ», և որովհետեւ բանաստեղծը իւր «բոյնը մոռանում է», բայց բոյնը ոչ այն վերի աղբերի իմաստով: Բանաստեղծութեան բոյնը ժողովուրդն ու իրական կեանքն է, որ չունի Զաւղախեանը: Նրա ամբողջ բանաստեղծութեան մէջ միայն «ի սուրբ վարդանաւս ըննայանդում», գրուած 1828 թուին, հեռւեայ աղբերն եմ գտնում ժամանակակից կեանքի մասին:

Նըստի մշակ ընդ հովանեաւ ի բարտի

Լայ զիւր վաստակ ծածկէ զլալիս զոր պարտի:

Հայի ի քերտն յամարայնի լի գաթուն,

Ոչ իւր մընայ մեղուացն անմեղ գունդ պարուն:

Զհօտ իւր խըլէ Մար յուղիահար շոյտ ի քայլ:

Ոչ թէ քղմին որպէս ներող քան զայն քայլ:

Ահա թէ ինչը պիտի լինէր մեր բանաստեղծութեան «բոյնը», որ վերջում միայն գտել է Զաւղախեանը, բայց գրծախտաբար այն ժամանակ, երբ արդէն ուշ էր: Բայց նա մեր ապագայ բանաստեղծութեան այդ նիւթը գտել է կիտտ. նա շատ չափաւոր է իւր տենչանքների մէջ: Վարդանանց գործքը գովելով Եղիշէի նմանողութեամբ, նա խնդրում է.

Սո՛ւրբ վարդանանք, զայս երգ ձօնէ իմ գուսան

Ընդ լիունջ ծաղկանց որ յարենէ ձեր բուսան.

Վարձ ոչ հայցեմ դահ Պահլաւկաց հաւասար,

Ոչ զԱրծրունեաց զոր հիմնարկեաց Սանասար: . . .

Դարձցի մաղթեմ անդրէն Մասիս և Մարանդ,

Կանգնել ձեզ սուրբ տաճար ի կորդ ի մարմանդ. . .

Եւ այս հասկանալի է մի բանաստեղծի համար, որ մի քիչ վերեւում Մուսային Այրարատ հրաւիրելով՝ խնդրում է

Ոչ զԱրամեան երգածայնել ինձ բաղդ յոյր

Զբաջայաղթ նախապրտակ կամ Պարոյր.

Եւ ոչ չարին վիշապայաղթ գոռ Տիգրան,

Շամփրեալ ըզթոք ի նիդակին սուր ձիւրան:

Այլ Վարդանանց արեան զոր հեղ գոռ Աստան,

Լէր դրուագօք բարձրածայնիւր վիպասան: . . .

Ո՛վ երջանիկ սրբոյ դարուն գերգաստան,

Ի դա պանծս՝ ի դա ողորմ Հայաստան.

Ոչ թէ ի Հայկ ոչ ի Տիգրան կամ յԱրայ,

Ոչ և բերրի դաշտ զոր ցանեաց քեզ Շարայ:

Հեռու ուրեմն ամենայն ինչ որ աշխարհական է. հեռու հայրենի աշխարհ և քաղաքական կեանք, և դեռ սրբեր ու սրբեր միայն:

Վերջում յիշենք և այս, որ 1789, 1804 և 1815 թուերին



գրուած երեք քերթումներ կան, — «սուազ յաղթութեան ի հանդէս մենամարտութեան Որատեանց, Ողբերգեալ ի թատեր Միթիականց», «ի նենգ խառնող մահ Խոտորովայ Մեծի յաւարտ ողբերգութեանն եղերերգ», «ի թատերական ողբերգութեանն Երուանդայ Հայոց արքայի»: Սրանցից յայտնի էին լինում, որ 18-րդ դարու ղերջերում արդէն Միթարեանց հայերէն ներկայացումներ են տրուած, և երևի Զախճախեանը հայերէն, ի հարկէ, գրաբար, պիտեներ է գրել պատմական բովանդակութեամբ: Նոյնպէս Թոմաճեանի քերթումների մէջ կան երկու երգ «Յողբերգութենէ որբոյն Աբգլմսեհի», գրած 1802 թուին:

\*  
\*  
\*

ԵՂԻԱ ԹՈՄԱՃԵԱՆԻ (1777—1848) մեծ վաստակը մեր գրականութեան համար է Հոմերոսի Եղիականի և Ողիսականի թարգմանութիւնը. իրրե ինքնուրոյն բանաստեղծ սակաւաթիւ քերթումներ ունի և շատ աննշան է, թէպէտե Զախճախեանի չափ բռնայանքներ չի կազմում: Այդպիսիներն ընդամենն երկու են թուով՝ «Յարկածս իւր ողբ եկեղեցւոյն Հայաստանեայց», մի հին նիւթ որ սա էլ գնում է իւր բռնազօռ յանգերի մէջ, ապա «Առ Հայաստան խրախոյս ի պարտութիւն Տուղրիւայ ի Մանազկերտ»: Այս վերջին նիւթը նոյն յանգերով և յանգերի՝ նոյն դասաւարտութեամբ երգել է նոյն 1828 թուին և Արոէն Բագրատունին, երևի մըցելով Թոմաճեանի հետ: Տուղրիւի այդ պարտութիւնը Մանազկերտի մօտ, որ ոչ մի առանձին նշանակութիւն չի ունեցել թուրքերի յառաջխաղացման շարժման համար և բնաւ չի ազդել Հայաստանի բախտի վրայ, անշուի որդուրում է այս երկուոնի ևս անշուշտ միայն այն պատճառով, որ «բռնայանք և բռնախարգ» ոտանաւոր են գրում, այսինքն նիւթն և յանգերը տուողը պատուիրել է նրանց որդուրուել այդ նիւթով և խոշորացնել այդ դէպքը: Եւ այդպէս վարուել են մեր քերթողները: Բագրատունու քերթածը՝ «Հայաստան առ Խուժաստան ի Մանազկերտ» անպայման շատ աւելի բարձր է քան Թոմաճեանինը, իւր թափով և ուժգնութեամբ, որ առաջանում է սակայն ոչ թէ նիւթից այլ զօրեղ խօսքերից: Բերենք մի մի հաառած երկից ևս:

Թոմաճեանը գրում է.

Գլուխ տարւոյդ հաս նաւատարդ,  
Վառեաց հայկազն ի դէն ի զարդ.  
Հառաահարուտս իբրեւ բարտի,  
Ճօճեա զաէգդ որպէս պարտի:  
Թագիդ, բարէ, եհաս գարուն.



Դու յարբայից անց ի պարուն:  
 Բո երկնաճեմ ուր ի Մասիս,  
 Ահ արկանեւ աղգաց կառնա:  
 Զի ցնծացէ քաջն իմ Արամ,  
 Եւ մանկըտոյն նորուն երամ:  
 Օ՛չ լիացին իբրեւ Շարայ,  
 Իցիւ առէկը կանգնեն զԱրայ:  
 Զի գող մեղուդ Տուղրիլքն բոռ,  
 Տապառա մեղուացն անկցի ի գոռ:  
 Եւ դու ըզթագդ առցես, Թորդոմ,  
 Ճաճանչ հատցէ շիջեալըդ մոմ:  
 Դու բարձրացիս գեղով նոճի,  
 Որ ի դեմիւն անոյշ ճոճի: և այլն:  
 Իսկ Բազրատունին դրամ է.

Ի գաւ աճոյն մեր նաւասարդ,  
 Զգեցան ազինք զինուց ըզգարդ,  
 Բարձրացաւ բախա մեր զերդ բարտի,  
 Դունդ թշնամեաց մերոց պարտի:  
 Իբր այժեմանց հոյք ի գարուն  
 Խայտան Հայոց կոյսը ի պարուն,  
 Եւ ի բոլորն քո, Մասիս,  
 Որ հովանի ոչ պահառիս,  
 Խռնեալ կարաւ կայթէ Արամ  
 Որդւովը իւրովը երամ երամ:  
 Առատութիւն դայ քեզ, Շարայ,  
 Զիք Շամիրամ Գըժբախա Արայ:  
 Հալաճեցան իբրեւ ըզբոռ  
 Ի ծուխ ցառման մարտկացրո գոռ:  
 Նիսա կեր զմեղըր քո, Թորդոմ,  
 Զախ առտեղաց վառեա քեզ մոմ:  
 Ի բաց կացցէ շիրմաց նոճի,  
 Որ ի մառնչ տխուր ճոճի: և այլն:

Թումաճեանի միւս ոտանաւորներն են «ի սուրբն Դաւիթ մարգարէ», «ի հարսանիս մեծայ պայադատաց բարերարաց աղգիս», «առ ազնուազարմ պատանի Յ. Գարեգին Տաւեան», — «որ ուսումնական յաղթանակաւ արքունի հրովարտակին դարձ առնէր ի Փարիզոյ ի հայրենին» անդը ընդ վենետիկ անցեալ յայց վանացոյ: — Այս վերնագիրներն արդէն ցոյց են տալիս արժէքն այդ բանաստեղծութիւններէ, որոնք քառասնական թուականներէ ծնունդ են: Աւելի աչքի է ընկնում 1843 թուին գրած «Տաղերգութիւն ի մեծն Ալիթար Արբայ»: Հոմերոսի



Ոգիսականի թարգմանչին վայել էր այսպէս նմանողութեամբ  
այսպէս սկսել իւր այդ տաղերգը.

Ինձ, երկին, զԱյրն երգեա, որ յաղգէ հողածին  
Վերառեալ հաշտացաւ որպէս մարդ երկնային.

Ինքն ողջոյն լուսաղգեաց իբր արփի գերակայ,  
Եւ զերկրորդն զխաւար փարատեաց Թորգոմայ:

Ինձ դարձեալ զայն ասա. այրն անյանց զի՞ զի  
Բաղմադէմ լրլկանօք տանջեցաւ յաշխարհի.

Բայց և ճետ զիւր ձգեաց ի նորոգ դերգաստան,  
Բերկրեցաւ ծնընդովք, բերկրեցի և յապայն:

Սպասում էնք մի նոր Ոգիսականի բայց բարեբախտաբար  
Վարձ է կտրում Թոմաճեանը. մի երկու խօսքով նկարագրում է  
Հայաստան զրախօր, Ագամ, Զրհեղեղ, Նոյ, Հայկ:

Ճետը սորա քաջազունք, որ ի վէպս հրաշանան.

Եւ թէպէտ փոքր յաճու, գործ ցուցին աննրման:

Եւ ապա Արամին, Տիգրանին ու Վահագնին յիշելուց  
յետոյ՝

Մի՛ այլ շատ, իմ քընար, զիմ՝ ըզբաջս յուշ ածեր,

Զի մի՛ յերգ քո յապայն ցաւ ածցես կարեւիէր:

Հայաստանի վիճակը թշուառ է. աւեր այգի, աւեր տունք  
է նա.

...Հարու ածեալ տուն Հայկայ զիւցաղին,

Ահ, խալառ խըրթնացաւ, հետքն անգամ չերևին:

Հայաստանը մի կոյրերի աշխարհ է, ուր մարդիկ

Ձեռն ի ծնօտ գերարտօսը յորդ հեղուն ի յարկին,

Ձայն յողորմ այր ընդ այր կողկողին, ուր է լոյս.

Այսպէս աղգն իմ նըստէք և անյոյս: ...

Գութ հարաւ Արարչին. «մինչև ցե՞րք այդ խաւար

Թախճութեամբ պաշարէ զԱրամեանն ըզգաւառ»:

Ձայն հնչեաց աստուածեան, «Հապա լոյս եղիցի».

Եւ եղև լոյս արհի Մըխիթարս արփենի:

Մխիթարն ուրեմն է Հայաստանի Լուսաւորիչ արեգակը:  
և նրա ծնունդները միմեանց հետ մըցում են հայերի մէջ «խմաս-  
տից ճրագը» վառելու համար.

Ոմն յիմաստ աստուածեան, ոմն ի վարժքս բնական,

Կէսք յաշխոյժ Պառնասին, կէսք ի գիր հայկաբան:

Այդ ոտանաւորն իւր շօշափած խնդրով, թէպէտ թոյլ  
արտայայտութեամբ, աւելի մեծ նշանակութիւն ունի քան  
Մխիթարեան քերթողների միւս բաղմաթիւ ոտանաւորները.  
որա մէջ գտնէ աղգի լուսաւորութեան հոգն է տարւում: Բայց  
Թոմաճեանը զրանով ոչ մի առանձին նշանակութիւն չի ստա-



նույն մեր ըսնաստեղծութեան համար, ոտովհետև նրանից առաջ, ինչպէս կը անոնենք, ուրիշները նոյնն արդէն երգել են աւելի գեղեցիկ և ուժեղ կերպով: Մխիթարեան վարդապետն ուշացել է և նա իւր «արփենի Մխիթարի» տաղերգութեամբ 1843 թուին, միայն թոյլ արձագանք է տալիս ուրիշներին երգածին և սրբացնում Մխիթարին: Թոմաճեանը ոչ նիւթի և ոչ ձկնի ստեղծող է, նա չէր կաշող ուղղութիւն տալ մեր գրականութեանը:

Մ. Արեղեան

## ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

### ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Ալեքսանդրապոլի Փոխանորդի ուղղած Պետերբուրգի եկեղեցական խորհրդին եւ Բ. Հ. Կույսուրական Միութեան իւր վիճակի դպրոցական դրութեան մասին.

Յանձն առնելով երկրորդ անգամ Ալեքսանդրապոլի ընդարձակ վիճակի փոխանորդի պատասխանատու պաշտօնը, ես միայն մի նպատակ ունէի, իմ ուժերը ներածի չափ օգտակար լինել այդ վիճակի բազմաթիւ կարիքները գէթ մասամբ թեթեացնելու:

Ալեքսանդրապոլի վիճակն իր 160 հազար հայ ազգաբնակչութեամբ մի քաղաքով և 125 հայ գիւղերով ներկայացնում է վերին աստիճանի անմխիթար դրութիւն. վերջին տարիների անբերրիութիւնից, կարկտից, երաշտից առաջացած աղքատութիւնը քայքայել է ժողովրդին, հիւժեւ և մաշել է նրան նիւթապէս և բարոյապէս: Զխօսելով Ալեքսանդրապոլ քաղաքի մասին, որն իր մէջ պարունակում է բազմազան պարապմունքներով զբաղուող հարուստ և աղքատ ընտանիքներ, ես ցանկանում եմ